# Ո Ր Ո Շ Մ Ա Ն   Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

## ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 30.04.2020թ. ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Ալավերդու համայնքային սեփականություն հանդիսացող՝ Աքորի գյուղի տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողամասն անհատույց օգտագործման տրամադրելու մասին

(Զեկ. Ս. ԽԵՉՈՒՄՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով «Ալավերդու արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի տնօրենի 10 սեպտեմբերի 2019թ. N 110 գրությունը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ  է.**

1. Թույլատրել Ալավերդի համայնքի ղեկավարին՝ համայնքային սեփականություն հանդիսացող Աքորի գյուղի «տափի դուզ» կոչվող տեղամասում գտնվող (06-0022-0101-0086-01 ծածկագրից առանձնացված), 1.0 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասը անհատույց օգտագործման իրավունքով, 25 /քսանհինգ/ տարի ժամկետով տրամադրել «Ալավերդու արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ին գործնական աշխատանքներ իրականացնելու համար:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-իրավաբանի պաշտոնակատար Կարեն Կոնինյանին՝ կազմակերպել անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման աշխատանքները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից:

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՔՈՐԻ ԳՅՈՒՂՈՒՄ 06-0022-0101-0086-01 ԾԱԾԿԱԳՐԻՑ <ՏԱՓԻ ԴՈՒԶ> ԿՈՉՎՈՂ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ 1.0 ՀԱ ՎԱՐԵԼԱՀՈՂԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ Ս.Գ.Խեչումյան




ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀՈՂԱՄԱՍ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ և ԲԱԺՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ
Հ, ՆԱԶԱՐՅԱՆ